Հուսիկ Արա

Տեսա, երկիր…

Կանգնել ես իմ առջև՝
երիտասարդ, խարտիշագեղ ու կապուտաչ,
իմ մի բուռ երկրի ազատություն.
խաղաղություն է քո հայացքը,
որ լցվում է աչքերիս մեջ:

Քո անվանակոչության օրն էր,
երբ Սիմեոնի պես գիրկս առա քեզ
և ասացի. «Տեսա փրկությունդ, երկիր»:
Մանուկ էիր փխրուն ու թավշե,
վճիտ էր հայացքդ ու կաթ էիր բուրում,
իսկ ես ջահել ու հպարտ՝
քեզ պահպանելու ուժով էի լցված:
Թևերիս մեջ առա քեզ,
սրտիս մոտիկ ու մաշկիս տակ պահեցի,
միակ երազս տվեցի ու հեքիաթս,
որ չէի պատմել դեռ ուրիշ մեկին.
խոստովանեցի, ինչպես ոչ մի կնոջ,
անգամ մորս և Աստծուն:

Ամռան արև է բուրում երիտասարդ քո հասակը.
հիմա դու ես ջահել ու հպարտ՝
ինձ պահպանելու ուժով լցված,

իսկ ես այր եմ հասուն՝ քո ավյունով ներշնչված:
Վաղվա օրն է չքնաղ ու գեղեցիկ,
որ գալու են դեռ ջահել ու պարմանի՝
քեզ հետ շուքով քայլելու,
երբ կլինես այր վսեմ,
և քո խոհերից իմաստություն կքաղեն: